ՆԱԽԱԳԻԾ 33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ
<<------>> <<----------->> 2011 թվականի N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 4-րդ կետի, <<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի, 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 68-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, ինչպես նաև 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի սահմանադրականությունը որոշելու հարցով:

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում՝ որպես Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ հանդես գալու համար լիազորել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրը:

Ա. Գրիգորյան